մետասան փառաւոր շիրմացն որք կան և մնան մինչեւ ցայսօր և մնասցեն դեռ ցյաւիտեանս ժամանակաց, ցորչափ շէն և կանգուն մնայցէ սրբավայրն այն հնոբեայ, զտանին խնկելի շիրիմք եղբարցն Յովսեփայ և Զաքարիայի Բարաղամ Շահրիմանեանց, որք յառատ գանձուց իւրեանց մեկենասք հանդիսացան բազմածախս տպագրութեան Զամչեանի կոթողային եռահատոր պատմութեան Հայոց, որ յետ Խորենացւոյն լեալ է և դեռ մնասցէ միակ ամբողջական պատմութիւն ազգիս, սկսեալ ի Հայկայ ցվերջ 18րդ դարուն։

Օրհնեալ եղիցին յիշատակք անմահ և ոսկեձեռն Բարերարացն։ Խնկովք անուշիւք և դափնեօք անթառամօք պաշտեսցին շիրիմք մեկենասացն որք ետուն անզուգական և անգերազանցելի պատմութիւն պաշտելի նախահարց իւրեանց։

Օրհնեալ եղիցին և քաղցր յիշատակք ազնուազարմ և քաջատոհմիկ Շահրիմանեանց, որք ուր և գնացին փայլեցան և փայլեցուցին զանուն Հայութեան յասպարիզին վաճառականութեան, մեծագործութեամբք իւրեանց և հայկական բնածին հանճարով իսկ, թէ՛ ի Վենետիկ, թէ՛ ի Վիեննա և թէ ի Լիվոռնոյ, ի Տփղիս, և ի Մոսկով, յԱմսդերտամ և թէ ասա ի Կալկաթա և անդ ի Մատրաս Հնդկաց։

Այլ դու եկ և ընդ տգիտութիւն հայրենակցաց նոցին Նոր–Ջուղայեցւոց զարմացիր, զի դրդեալ ի կրից չար նախանձու և դառն ատելութեան և կուրացեալ մոլեռանդութեան կործանարար ախտիւ, ելին նզովեցին զտոհմն Շահրիմանեանց. իսկ վասն ո՞ր յանցանաց նոցին արդեօք, միայն թէ վասն կաթողիկէ դաւանութեանն որում պատկանէին նոքա, սկսեալ ի Հին–Ջուղայէն։ Շահրիմանեանք գոլով դաւանակից Հռովմէական եկեղեցւոյ, զօրավիգ պաշտպանք և ջատագովք հանդիսանային օտարազգի կաթոլիկ հոգեւորականացն, որք եկեալ՝ վանս, եկեղեցիս և դպրոցս հաստատեալ էին թէ յԱսպահան[1] և թէ ի Նոր–Ջուղա[2], յայն սակս նզովից ենթարկեցան և հալածեցան ի հայրենակցաց իւրեանց Լուսաւորչականաց։

Յամօթ և ի յաւիտենական նախատինս խաւարամիտ հոգեւորականացն ժամանակին գրեսցին այդ անքրիստոնէավայել աբարք նոցին, որովք աղարտեցին զբարի անուն համբաւատենչն Նոր – Ջուղայի, պատմութեան յանձնելով զմոլեռանդութիւն իւրեանց չարագուշակ և յաւէտ տխրահռչակ։

Յաւ է ինձ յիշատակել աստանօր զանցս հակառակութեանն որ ի միջի Լուսաւորչական և կաթոլիկ ազգայնոց, զի Ստեփաննոս Առաջնորդ[3] Ամենափրկչեան սրբոյ վանացն Նոր–Ջուղայի, իւրով հոգեւորա-

---

1. Գտանէին յԱսպահան մայրաքաղաքին երեք, կառուցեալք ի հետազայ կարգաց.

ա. – Լուսիտանացի Օգոստինեանց (Augustiniani Lusitani) ի թաղն Հիւսէյնիս։

բ. – Բոկոտն Կարմելիտեանց (Carmelitani discalceati) ի թաղն Հիւսէյնիս։

գ. – Կապուչինեանց (Capucini) ի թաղն Ղալաթաբարօք։

3. Իսկ ի Նոր–Ջուղա, գտանէին նոյնպէս երեք եկեղեցիք կամ վանք որք էին ըստ հետազայ կարգին։

ա. – Յիսուսեանց (Societas Jesu) յանուն սրբոյն Յովսեփայ։

բ. – Բոկոտն Կարմելիտեանց (Carmel. discalceati) յանուն սրբոյն Եղիայի։

գ. – Դոմինիկեանց (Dominicani)։

Կայր և եկեղեցի մի յանուն սուրբ Աւետեաց, կառուցեալ ի Շահրիմանեանց, որոնք թեր ապարանիցն իւրեանց, որք անկանէին յարեւելեան կողմն Նազարի պողոտային, որ մինչեւ ցայսօր կոչի «Դուռն Շահրիմանեանց» (Շահրիմանենց Դարվազա)։ Ի միջի եօթն եկեղեցեացն Դոմինիկեան վանքն միայն կայ և մնայ կանգուն ցայսօր, վանահայր և առաջնորդ վանացն զարդիս է Նոր–Ջուղայեցի Գերապայծառ Մկրտիչ Վ. Խաչիկ Աբգար, այր ազգասէր և ժողովրդասէր, հովիւ քաջ որ դնէ զանձն ի վերայ իւրոյ փոքրիկ հօտին։

3. Ստեփաննոս եպիսկոպոս Նոր–Ջուղայեցի որ նզովեաց զտուն Շահրիմանեանց, ըստ օրինակի սրբազան հայրապետացն Տիեզերական ժողովոյն որք նզովեցին զՆեստոր և զայլ աղանդաւորսն, չմնաց սակայն զերծ և ազատ յերկնառաք պատուհասից, զի յամին 1697, հրաւիրանօք եպիսկոպոսացն Մայր Աթոռոյն Հայաստանեայց, եկ գնաց ի Սուրբ Էջմիածին ունել զգահն կաթողիկոսութեան և ընկեցիկ առնել զՇահապետ կաթողիկոս, այլ չյաջողեցաւ նստել յաթոռն բազմաչարչար